«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Առարկան՝ Բնագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լիանա Իսկանդարյան

Ուսումնական հաստատություն՝ «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ավագ նախադպրոցականի ընդհանուր բնութագիրը, հոգեկանի զարգացման առանձնահատկությունները 5

1.2 Վեց տարեկանների դպրոցին հոգեբանամանկավարժական նախապատրաստման կարևորությունը 9

1.3 Դպրոցին պատրաստ լինելու չափանիշների ընդհանուր բնութագիրը. 16

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ.....19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Երեխայի՝ դպրոցին նախապատրաստման հիմնախնդիրը միշտ էլ եղել է հոգեբանների և մանկավարժների ուշադրության շրջանակներում: Այսօր էլ այն մնում է արդիական ու կարևոր՝ պայմանավորված հանրակրթության մեջ տեղի ունեցող արմատական փոփոխություններով, ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային առումով:

Դպրոց ընդունվելը շրջադարձային փուլ է երեխայի կյանքում: Դպրոցական ուսուցման նախապատրաստումը երկարատև և բարդ գործընթաց է, այն ընթանում է նախադպրոցական մանկության ողջ ընթացքում և իր գագաթնակետին է հասնում վեց տարեկանում՝ երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան:

Ուսուցման բովանդակությանը ներկայացվող ժամանակակից պահանջներին համապատասխան, դպրոցականներից պահանջվում է ունենալ մտավոր, ինտելեկտուալ, հուզակամային ոլորտների զարգացման համապատասխան մակարդակ, տիրապետել հաղորդակցման հմտություններին, լինել ակտիվ և հետաքրքրասեր:

Հոգեբանամանկավարժական գիտության մեջ կան այս հիմնախնդրի վերաբերյալ տեսական ու գործնական տարբեր մոտեցումներ (Լ.Ա.Վենգեր, Դ.Է.Էլկոնին, Ս.Վ.Զապորոժեց, Ն.Ն.Գուտկինա և ուրիշներ), ովքեր կարևորում են նախադպրոցականի դպրոցին նախապատրաստվածության հոգեբանամանկավարժական բովանդակությունը, պայմանները՝ շեշտը դնելով առանձին բաղադրիչների վրա:

Խնդրի կարևորությունից ելնելով մշակվում են հատուկ մեթոդներ, մեթոդիկաներ, որոնք թույլ են տալիս մշակել այնպիսի ծրագրեր, որոնք նպաստում են նախադպրոցականի արդյունավետ դպրոցական պատրաստվածությանը, ինչով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Բացահայտել երեխայի դպրոցի նախապատրաստման առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակից ելնելով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Իրականացնել հիմնահարցի վերաբերյալ հոգեբանամանկավարժական գրականության վերլուծություն:
2. Վերլուծել հինգից վեց տարեկանների հոգեկանի զարգացման առանձնահատկությունները:
3. Ներկայացնել երեխայի դպրոցին հոգեբանամանկավարժական պատրաստվածության առանձնահատկությունները:
4. Ներկայացնել գործնակ առաջադրանքներ /պարապմունքներ, խաղեր/՝ ուղղված դպրոցի արդյունավետ նախապատրաստմանը:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, 1 տեսական գլխից, գործնական առաջադրանքներից, եզրակացություններից, գրականության ցանկից: Համակրգչային շարվածքով կազմում է 22 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ավագ նախադպրոցականի ընդհանուր բնութագիրը, հոգեկանի զարգացման առանձնահատկությունները

Գոյություն ունեն բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են ավագ նախադպրոցական տարիքի երեխաներին: Փորձենք անդրադառնալ դրանց, որոնք հատուկ նշանակություն ունեն դպրոցական կյանքին սոցիալ-հոգեբանական հարմարման համար. ոչ բավարար սոցիալ- բարոյական և իմացական փորձ:

Սոցիալ բարոյական փորձը հանդիսանում է կարևոր, երեխայի մեջ պատասխանապվության զգացում դաստիարակելու համար: Դա թույլ է տալիս աշակերտին միջանձնային հարաբերություններում կարգավորել իր վարքը, զսպել իմպուլսիվ ցանկությունները, երբ այն հակասում է մյուսների հետաքրքրություններին, ընդունել մեծահասակների պահանջները, արգելքները և թույլտվությունները, ենթարկվել հասարակական կարգ ու կանոնին, գիտակցել իր արարքը, ուրախանալ ընկերների հաջողություններով, անհրաժեշտության դեպքում ցուցաբերել կարեկցանք:

Նախադպրոցականը կուտակում է հասակակիցների և ընտանիքում մեծահասակների հաղորդակցման և փոխհարաբերությունների որոշակի փորձ: Նրա մոտ առաջ են գալիս պատկերացումներ լավի և վատի մասին, ինչն է թույլատրվում և ինչն է արգելվում, ինչպես պետք է իրեն դրսևորի տարբեր իրավիճակներում:

Խաղի մեջ և հաղորդակցման ընթացքում երեխաները միմյանց փոխանցում են իրենց գիտելիքները, կարողությունները: Աստիճանաբար երեխայի մեջ կուտակվում է սոցիալական և իմացական փորձ, որի բովանդակությունը հիմնականում կախված է մեծահասակների կենսակերպից, դաստիարակչական դիրքորոշումից:

Առկա պահանջմունքների և իմպուլսիվ ակտիվության գերակշռություն: Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեջ առաջ են գալիս տարբեր պահանջմունքներ, որոնք մշտապես փոխարինում են մեկը մյուսին: Դրանց առանձնահատկությունն այն է, որ դիտվում են որպես անհետաձգելի, ցանկալի, կարևոր: Անհետաձգելի ցանկությունն այնքան մնեծ է, որ փոքրիկին ստիպում է

անցնել դրա բավարարմանը՝ նախապես չմտածելով այն մասին, թե ինչ հետևանք կունենա: Հաճախ երեխան լավ գիտի, որ չի կարելի, սակայն ցանկության ուժն առավել է: Առկա պահանջմունքները սերտորեն կապված են իմպուլսիվ ակտիվության հետ, առաջին իսկ դրդման դեպքում առանց դանդաղելու գործողության անցնելու հետ: Օրինակ՝ դաստիարակը դեռ չի արտաբերել հարցը, երեխան արդեն ձգտում է պատասխանել: Որպես ավագ նախադպրոցականի հոգեկան զարգացման առանձնահատկություն՝ առանձնացվում է երեխայի իմացական գործընթացների ինքնագիտակցության զարգացման մակարդակը: Նախադպրոցական տարիքում հոգեկան գործընթացներից գերակայողը մտածողությունն է, որի շնորհիվ մի կողմից ինտենսիվորեն զարգանում է մտավոր գործունեությունը, մյուս կողմից՝ ինտելեկտի զարգացմամբ պայմանավորված մյուս հոգեկան գործընթացները: Ակնառու–պատկերային մտածողությունը փոխարինվում է բառատրամաբանական մտածողությամբ, երեխայի մոտ նկատվում է վերլուծական–տրամաբանական դատողություններ:

Այս տարիքը Ժ.Պիաժեն անվանել է կոնկրետ գործողությունների տարիք, քանի որ դրանք կարող են կիրառվել միայն կոնկրետ նյութի վրա: Հաջորդ գերակայող գործընթացն ընկալումն է: Այս տարիքում այն բավականաչափ զարգացած է, երեխան կարող է նպատակաուղղված ձևով զննել առարկաները, նկարները, այնուամենայնիվ նրա կողմից առանձնացվում են առավել բարդ, աչքի ընկնող հատկությունները, այն է՝ գույնը, ձևը, մեծությունը: Այս տարիքում հիշողությունը զարգանում է երկու ուղղությամբ՝ կամային և իմաստավորման: Երեխաները կարողանում են ինչպես ոչ կամային, այնպես էլ կամային ձևով հիշել առաջադրանքը: Ավագ նախադպրոցականն ավելի արագ և լավ մտապահում է կոնկրետ տեղեկությունները, իրադարձությունները, դեմքերը, առարկաները, փաստերը, քան սահմանումները, բացատրությունները, կանոնները: Նրա մոտ լավ զարգացած է մեխանիկական հիշողությունը, ունի մեխանիկորեն մտապահելու, կրկնելու հակում՝ առանց հիշվող նյութի ներքին, իմաստային կապերի գիտակցման: Այս տարիքում զարգանում է նաև ուշադրությունը: Առանց դրա գնահատման ուսումնական գործընթացն անհնար է:

Ավագ նախադպրոցականներն ավելի ուշադիր են, նրանք արդեն կարողանում են կենտրանացնել իրենց ուշադրությունը ոչ այնքան հետաքրքիր գործունեության և

գործողությունների վրա, բայց նրանց մեջ, այնուամենայնիվ, գերակշռում է ոչ կամային ուշադրությունը: Նրանց համար արտաքին տպավորություններն ուժեղ շեղող գործոններ են: Նրանց դժվար է կենտրոնանալ բարդ, անհասկանալի նյութի վրա: Ուշադրությունն աչքի է ընկնում ոչ մեծ ծավալով:

Հինգ-վեց տարեկանում երեխայի անձը զարգանում է վարքի և գործունեության դրդապատճառների ստորադասման և ինքնագիտակցության զարգացման հետ մեկտեղ: Երեխայի անձի ձևավորումը այս տարիքում մեծ չափով կախված է մեծահասակների դրական վերաբերմունքից:

Սոցիալական դրդապատճառը՝ պատասխանատվության զգացումն է, որը երեխան վերցնում է մեծահասակներից, յուրացնում ընտանիքում կամ՝ հասարակական միջավայրում: Մյուս դրդապատճառը հաջողության հասնելու ձգտումն է. սա ոչ հազվադեպ է դառնում դոմինանտ: Հաջողության հասնելու ձգտումն իմացական հետաքրքրությունների հետ առավել արժեքավոր դրդապատճառ է և այն հարկավոր է տարբերել հեղինակության դրդապատճառից: Այն պակաս հանդիպող դրդապատճառ է և բնորոշ է բարձր ինքնագնահատական ունեցող երեխաներին: Այն երեխային մղում է առանձնանալու հասակակիցներից, առաջինը լինելու համար:

Ինքնագիտակցության զարգացումը վեց տարեկանում՝ ինքն իր մասին ունեցած պատկերացումների և սեփական անձնային որակներին տրվող գնահատականն է՝ ինքնագնահատականը: Բարձր առաջադիմությամբ և ակտիվ երեխաների մեջ դրսևորվում է բարձր ինքնագնահատական, հետ մնացող և թույլ երեխաների պարբերական անհաջողությունները և համապատասխան վերաբերմունքը իջեցնում են վստահությունն իրենց և սեփական ուժերի նկատմամբ: Ցածր ինքնագնահատականով երեխաների մեջ ի հայտ է գալիս ոչ լիարժեքության, նույնիսկ՝ անհուսալիության զգացում: Անհրաժեշտ է ինքնագնահատման պահանջմունքը բավարարել գործունեության տարբեր ձևերում՝ ուսում, խաղ, աշխատանքային գործունեություն:

Ինքնագնահատման գործում մեծ նշանակություն ունի ընտանեկան դաստիարակության ոճը, ընտանիքում ընդունված արժեքները: Բարձր ինքնագնահատականով երեխաներն ընտանիքում դաստիարակվում են կուռքի սկզբունքով և շատ վաղ գիտակցում իրենց բացառիկությունը: Ցածր

ինքնագնահատականով երեխաները տանը մեծ ազատություն են ստանում, բայց դա, ըստ էության, ծնողների բարձիթողության արդյունք է: Նման երեխաների ծնողները նրանց կյանքին մասնակցում են միայն այն ժամանակ, երբ ծագում են կոնկրետ խնդիրներ՝ ուսումնական առաջադիմության հետ կապված: Երեխայի համար առաջին պլան են մղվում, այն որակները, որոնք առավել մտահոգում են ծնողներին՝ հեղինակության ապահովումը, ենթարկվող, խելոք լինելը և այլն:

Այսպիսով, ավագ նախադպրոցականի հոգեկանի զարգացման առանձնահատկություններն են սոցիալ-բարոյական, իմացական՝ մտածողություն, հիշողություն, ընկալում, ուշադրություն, իսկ անձնավորության ձևավորման առանձնահատկություններից կարևորվում է դրդապատճառային ոլորտը:

1.2 Վեց տարեկանների դպրոցին հոգեբանամանկավարժական նախապատրաստման կարևորությունը

Նախադպրոցականի պատրաստվածությունը դպրոցին նախադպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Դպրոցական պատրաստությունը պայմանավորված է երեխայի օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական, հոգեկան գործընթացների զարգացման որոշակի մակարդակով, որը հնարավորություն կտա հինգից վեց տարեկան երեխաներին նոր պայմաններում հարմարվել նոր գործունեությանը, նոր կանոնակարգի ծանրաբեռնվածությանը:

Անհրաժեշտ են նաև որոշակի գիտելիքներ, հմտություններ, կարողություններ, որոնք թույլ կտան առաջին դասարանում հաջողությամբ յուրացնել ուսումնական նյութը: Հոգեբանամանկավարժական գրականության մեջ առանձնացնում են երեխաներին դպրոցին նախապատրաստելու երկու ուղղություն՝ հատուկ և ընդհանուր:

Հատուկ նախապատրաստումը նախատեսում է երեխաների զինումն այնպիսի գիտելիքներով, պատկերացումներով, կարողություններով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են դպրոցում ուսումնական առարկաներ ուսումնասիրելու համար:

Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունի մանկապարտեզներում և տարրական դասարաններում իրականացվող աշխատանքների և ծրագրերի փոխհամաձայնությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և ուսուցման առանձնահատկությունները: Հատուկ պատրաստվածությունը դպրոցական հաջող ուսուցման կարևորագույն գրավականն է: Այս մասին են վկայում մի շարք ուսումնասիրություններ, աշխատություններ:

Ուսումնասիրելով երեխաների դպրոցական պատրաստվածության հարցերը՝ Բ. Գ.Անանևն ընդգծում է երեխաների ընդհանուր և տարածական կողմնորոշման զարգացման առանձնահատկությունը: Իրականացնելով դպրոցական ուսուցման հատուկ պատրաստվածության խնդիրը՝ հիմնականում գրաճանաչության ուսուցումը, մանկապարտեզներում անց են կացվում դիդակտիկ խաղեր և վարժություններ, որոնց ընթացքում երեխան սովորում է առանձնացնել բառի մեջ առկա հնչյունները, բառը բաժանում է վանկերի, նախադասությունը՝ բառերի, և

որոշակի թվով բառերից ինքնուրույն կազմում է նախադասություններ: («Անվանիր բառը անհրաժեշտ հնչյունով», «Ի՞նչ է քո անունը», «Ասա հակառակը», «Դասավորիր ճիշտ»): Նմանատիպ բարդ գործողություններ երեխաները պետք է կարողանան կատարել նաև թվերի հետ՝ հաշվել, թվեր կազմել, լուծել առաջադրանքները և այլն: Երեխաների դպրոցական ուսուցման հատուկ պատրաստվածությունն արդյունավետ կարող է իրականացվել միայն ընդհանուր պատրաստվածության հետ միասին: Ընդհանուր պատրաստություն ասելով հասկանում ենք երեխայի ֆիզիկական և հոգեբանական զարգացվածության աստիճանը: Նշենք ֆիզիկական պատրաստության չափանիշները:

Նախադպրոցական մանկության բոլոր փուլերում երեխայի ֆիզիկական դաստիարակությանը մեծ ուշադրություն է հատկացվում: Առողջ վիճակը, դիմացկունությունը, անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ օրգանիզմի բարձր դիմադրողականությունը, երեխաների դպրոցական ուսուցման պատրաստության անհրաժեշտ պայմաններ են: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն կենսաբանական տվյալները: Նյարդային համակարգի գրգռման և արգելակման գործընթացներից զարգանում է արգելակումը, որը հանդիսանում է կամային մի շարք որակների ձևավորման ֆիզիոլոգիական հիմք: Նյարդային համակարգի հավասարակշռության և շարժունության գործընթացները օգնում են երեխային վերակառուցել սեփական վարքը փոփոխվող իրավիճակներում, սակայն նյարդային համակարգի հյուսվածքներում դիտվում է նոր էներգիայի սպառում, որը բացասաբար է ազդում երեխայի զարգացման վրա: Դպրոց ընդունվողի անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկությունները պետք է մշտապես լինեն ուսուցչի ուշադրության կենտրոնում:

Որոնք են հոգեբանական պատրաստության չափանիշները: Դպրոց ընդունվելիս երեխաները հարցազրույց կամ թեստավորում են անցնում: Մանկավարժները ստուգում են նրանց գիտելիքները, յդ թվում նաև կարդալու և գրելու ունակությունները: Հոգեբանը բացահայտում է երեխայի դպրոցական ուսուցման հոգեբանական պատրաստությունը: Դպրոցական ուսուցմանը հոգեբանորեն պատրաստ լինելու հարցն ունի կարևոր գործնական նշանակություն: Դրա հիմնական նպատակը դպրոցական կյանքին հարմարվելն է: Դպրոցին հոգեբանական

պատրաստվածությունը բարդ գործընթաց է, որը ներառում է երեխայի անձնային, մտավոր և հուզակամային ոլորտների որոշակի մակարդակ, որոնք հատկապես կարևոր են դպրոցում արդյունավետ գործունեություն ծավալելու, սոցիալական նոր պայմաններին հարմարվելու, հարաբերությունների նոր ոլորտ առանց դժվարությունների ընդգրկվելու համար:

Դպրոցական ուսուցման սոցիալ-հոգեբանական նախապատրաստման առանձնահատկությունները: Քաջ հայտնի է, թե որքան դժվար է երեխային սովորեցնել, երբ ինքը դա չի ցանկանում: Դպրոցում հաջողությամբ սովորելու համար երեխան ամենից առաջ պետք է ձգտի դեպի նոր, դպրոցական կյանքը, հետաքրքրություն ցուցաբերի դասերի և առաջադրանքների նկատմամբ: Երեխայի մեջ նման ցանկության առաջացմանը կարող է նպաստել մեծահասակների կողմից ուսուցման՝ որպես կարևոր բովանդակային գործունեության արժևորումը: Կարևոր է նաև երեխայի վերաբերմունքը դպրոցի հանդեպ: Մեծ դեր է խաղում նաև տարիքային նոր մակարդակ բարձրանալու և փոքրերի աչքում մեծ երևալու երեխայի ցանկությունը: Արդյունքում նրա մոտ ձևավորվում է նախադպրոցականի «ներքին դիրքորոշումը»:

Դպրոցին սոցիալ-հոգեբանական պատրաստման գործում անչափ կարևոր է երեխայի վերաբերմունքը, ուսուցչի և ուսումնական գործունեության, հասակակիցների, հարազատների և ինքն իր նկատմամբ: Երեխան պետք է կարողանա ճիշտ ընկալել և գնահատել դասի իրավիճակը, ուսուցչի մասնագիտական դերը: Հասակակիցների նկատմամբ վերաբերմունքում երեխայի մեջ պետք է զարգացնել այնպիսի որակներ, որոնք կօգնեն բացատրվել, փոխազդել հասակակիցների վրա, զիջել կամ համառել անհրաժեշտության դեպքում: Յուրաքանչյուր երեխա պետք է կարողանա ընդգրկվել մանկական կոլեկտիվ և գործել մյուս երեխաների հետ համատեղ: Տանը ընտանիքի անդամների կողմից պետք է դրսևորվի հարգալից վերաբերմունք երեխայի նոր աշակերտի դերի նկատմամբ: Դպրոցականի ինքնագնահատականը չպետք է լինի չափից բարձր և հակառակը: Բարձր ինքնագնահատականի կարող է առաջ բերել սխալ հակազդում ուսուցչի նկատողություններին:

Դպրոցական ուսուցման անձնային պատրաստությունը ներառում է նաև

բարոյական զարգացման որոշակի հատկանիշների ձևավորում, որոնք օգնում են երեխային գնահատելու իր կարողությունները, հարաբերություններ հաստատել շրջապատի մարդկանց հետ: Նախադպրոցականների և դպրոց հաճախող երեխաների հուզական բարեհարմարությունը մեծապես կախված է նրանից, թե արդյոք երեխաներին բավարարում է իրենց գրված դիրքը կոլեկտիվում: Իր սոցիալական դիրքով բավարարված լինելն օգնում է երեխաներին մեծահասակների նկատմամբ հարգալից վերաբերմունքի, ընկերական հարաբերությունների, ուրիշների հետաքրքրությունները և ցանկությունները հաշվի առնելու կարողության զարգացմանը: Անբավարարության դեպքում առաջանում է հասակակիցների հետ կոնֆլիկտային հարաբերություններ: Գ.Կրովցովը և Ե.Կրովցովան, դիտարկելով երեխաների փոխհարաբերությունների համակարգը, առանձնացրել են դպրոցական ուսուցման պատրաստվածության երեք ցուցանիշներ, որոնք կապված են երեխայի շրջապատի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ: Վերաբերմունք մեծահասակի, հասակակիցների և սեփական անձի նկատմամբ:

Սոցիալ-հոգեբանական պատրաստությունը ենթադրում է այլ երեխաների հետ շփվելու պահանջմունքի զարգացում, մանկական կոլեկտիվի հետաքրքրություններին և կանոններին ենթարկվելու կարողություն, աշակերտի դերը հաղթահարելու ունակություն:

Մի շարք հետազոտողների կարծիքով դպրոցին սոցիալ-հոգեբանական պատրաստության բաղադրամասում կարելի է առանձնացնել հետևյալ ենթակառուցվածքները՝ հաղորդակցական, սոցիալական, խոսքային կոմպետենտություն:

Սոցիալական կոմպետեմնտությունը որոշակի սոցիալ-մշակութային միջավայրում ընդունված վարքի նորմերի և կանոնների իմացումն է, վերաբերմունքը դրանց նկատմամբ, դրանց կիրառումը գործնականում: Խոսքային կոմպետենտության տակ հասկացվում է խոսքի զարգացման այնպիսի մակարդակ, որը երեխային թույլ է տալիս շփման գործընթացում ազատ կիրառել սեփական գիտելիքները լեզվի մասին: Կոմպետենտության այս երկու տեսակները նպաստում են հաղորդակցմանը:

Դպրոցական ուսուցման մտավոր կամ ինտելեկտուալ նախապատրաստում: Շատերը գտնում են, որ մտավոր նախապատրաստումը դպրոցական ուսուցման

նախապատրաստման գլխավոր բաղադրամասն է, իսկ դրա հիմքը երեխաներին գրել, կարդալ, հաշվել սովորեցները: Իրականում մտավոր նախապատրաստումը չի ենթադրում երեխաների որոշակի գիտելիքների կամ կարողությունների առկայություն: Կարևորը նրա բարձր հոգեկան զարգացվածության մակարդակի առկայությունն է, որը ապահովում է ուշադրության, հիշողության, մտածողության, գիտակցված կամային վերահսկումը: Ինտելեկտուալ նախապատրաստումը ենթադրում է երեխայի շրջապատող աշխարհի և կյանքի վերաբերյալ որոշակի գիտելիքների առկայություն, ինչպես նաև իմացական գործընթացերի զարգացվածության որոշակի մակարդակ: Մտավոր նախապատրաստման մեջ մտածական գործընթացներից կարևորվում է երեխաների վերլուծելու, համեմատելու, ընդհանրացնելու, դասակարգելու, առարկաների էական հատկանիշներն առանձնացնելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու և եզրահանգումներ կատարելու կարողություններ: Չնայած նախադպրոցական տարիքում իրականացվում է ուսուցման գործընթաց, սակայն երբեմն նույնիսկ գրել, կարդալ, հաշվել իմանալով երեխան կարող է պատրաստ չլինել դպրոցական ուսուցմանը:

Պատրաստականությունը բնորոշվում է նրանով, թե այդ բոլոր հմտությունները գործունեության որ տեսակի մեջ են ներգրավված: Նախադպրոցական տարիքում գիտելիքների և կարողությունների յուրացումը ներգրավված է խաղային գործունեության մեջ և դրանք այլ կառուցվածք ունեն: Սրանով կարելի է բացատրել, որ դպրոցական ուսուցման մտավոր պատրաստականությունը չի կարելի որոշել հաշվելու, գրելու, կարդալու հմտությունների ձևական մակարդակով:

Դպրոցական ուսուցման հոգեբանական պատրաստության կարևոր նախադրյալ է երեխայի հուզակամային պատրաստվածությունը: Լ.Ս.Վիգոտսկին կամային վարքը համարում էր սոցիալական, իսկ մանկան կամքի զարգացման աղբյուրը դիտարկում էր շրջակա միջավայրի հետ երեխայի փոխհարաբերություններում:

Ընդ որում կամքի սոցիալական պայմանավորվածության մեջ առաջատար դերը տրվում էր երեխայի՝ մեծահասակի հետ խոսքային շփմանը: Սկզբում երեխան իր վարքը ղեկավարում է մեծահասակների խոսքով, հետագայում դրան փոխարինում է սեփական խոսքը, որով էլ երեխան էական քայլ է կատարում կամքի զարգացման

ճանապարհին:

Կամային նախապատրաստում ասելով հասկանում ենք կամային մի շարք որակների՝ զսպվածության, համառության, համբերատարության բավարար մակարդակ: Կամային պատրաստությունը սովորաբար կապվում է նպատակադրման և այն իրագործելու հետ: Ավագ նախադպրոցականը միշտ չէ, որ կարողանում է նպատակաուղղված գործել: Հինգից վեց տարեկանների կամային գործողություններն ունեն իրենց յուրահատկությունները: Դրանք իրականացվում են իմպուլսիվ, չկանխամտածված գործողությունների ընթացքում, իրադրային հույզերի, ցանկությունների ազդեցությամբ: Այստեղ կարևոր է մեծահասակի օգնությունն ու հսկողությունը, դժվարությունները հաղթահարելու համար:

Վեց տարեկան, բնականոն զարգացում ունեցող, երեխան ունակ է հաղթահարելու իր անմիջական ցանկությունները, զսպելու զգացմունքները, հույզերը: Նրա մեջ հնարավոր է ձևավորել անհրաժեշտությամբ ղեկավարելու վարքի բարոյական դրդապատճառներ:

Այսպիսով, դպրոցական պատրաստվածությունը նաև մի շարք հատկությունների և որակների ամբողջական համակարգ է, որն, ըստ էության, բնորոշում է ավագ նախադպրոցականի ֆիզիկական, մտավոր, անձնային, սոցիալ-հոգեբանական, հուզակամային, բարոյական զարգացման աստիճանը:

Սոցիալական հարմարումը ենթադրում է երեխայի հարմարումը սոցիալական նոր միջավայրին, դպրոցին, դասարանին: Բարոյաիրավական հարմարումը ենթադրում է դպրոցում գործող բարոյական և իրավական նորմերի գիտակցում դպրոցական կյանքի կարգ ու կանոնի, դպրոցի պահանջների ընկալում:

Մանկավարժական հարմարումը ենթադրում է երեխայի հարմարվելը այն պահանջներին, որոնք առաջադրվում են դպրոցական կրթության և դաստիարակության կողմից:

Հոգեբանական հարմարումն է ուսուցչի մտածելակերպի, դիրքորոշումների, վարքագծի հետ:

Սոցիալ-հոգեբանական հարմարումը ենթադրում է հարմարում սոցիալական նոր հարաբերություններին համադասարանցիների, ուսուցիչների հետ: Սա կարևոր խնդիր է, քանի որ ուսուցիչը երեխայի համար պաշտոնական անձ է և բավականին

երկար ժամանակ է հարկավոր, որպեսզի երեխան հարմարվի ուսուցչի առաջադրած խնդիրներին: Այդ ընթացքում երեխան ներքին կոնֆլիկտ է ունենում, մինչև որ հարմարվում է ուսուցչին, և ուսուցիչը նրա համար դառնում է հեղինակավոր անձ:

1.3.Դպրոցին պատրաստ լինելու չափանիշների ընդհանուր բնութագիրը

Հոգեբանամանկավարժական գրականության մեջ առանձնացվում է երեխայի դպրոցին պատրաստ լինելու հետևյալ ցուցանիշները.

- Շարժումները կառավարելու ունակությունը.
- Սովորելու ցանկությունը:
- Սեփական վարքի կառավարումը:
- Մտավոր գործունեության տիրապետումը:
- Ինքնուրույնության դրսևորումը:
- Հասակակիցների և մեծահասակների նկատմամբ դրական վերաբերմունքը:
- Տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը:

Փորձենք բացահայտել դրանցից յուրաքանչյուրը: Շարժումները կառավարելու ունակությունը ենթադրում է բավականաչափ զարգացած մկաններ, շարժումների հստակություն, ձեռքի և աչքի շարժումների համաձայնություն, մատիտին, գրիչին, վրձնին տիրապետելու կարողություն:

Սովորելու ցանկությունը ներառում է ուսման դրդապատճառները, վերաբերմունքը դրա նկատմամբ, որպես կարևոր գործի, գիտելիքներ ստանալու ձգտումը, հետաքրքրությունը ուսումնական առարկաների հանդեպ:

Սեփական վարքի կառավարումը ներառում է արտաքին շարժողական վարքի կամային լինելը, դպրոցական ռեժիմին հարմարվելու կարևորությունը, դասերի ժամանակ ինքն իրեն կազմակերպելը, հոգեկան գործողությունների կամային կառավարումը, ուշադրության կենտրոնացվածությունը, ուսուցչի ասածները կամ դասագրքում տրված տեղեկությունները մտապահելու ձգտումը:

Մտավոր գործունեության տիրապետումը ենթադրում է երեխայի իմացական գործընթացների զարգացվածության որոշակի մակարդակ: Դա թույլ է տալիս հետևել առարկաներին և երևույթներին, նրանցում առանձնացնել այս կամ այն հատկանիշներն ու որակները, տրամաբանական գործողությունների, նյութը գիտակցված մտապահելու միջոցների տիրապետումը:

Ինքնուրույնության դրսևորումը կարելի է դիտարկել որպես լուծման ձևեր փնտրելու և յուրաքանչյուր նորին ու տեսածին բացատրություններ տալու ձգտում, տարբեր ուղիներ ընտրելու ցանկություն, լուծման տարբեր տարբերակներ գտնելու

միտում, պրակտիկ գործունեության ընթացքում առանց կողմնակի անձանց օգնության անհրաժեշտություն:

Հասակակիցների և մեծահասակների նկատմամբ դրական վերաբերմունքը ենթադրում է երեխաների մեջ իրենց և ուրիշների համար ջանալու, աշխատելու ցանկության դրսևորում և սովորություն, տրված հանձնարարության նկատմամբ պատասխանատվության գիտակցում ու կարևորություն:

Տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը կապված է տարածության և ժամանակի մեջ կողմնորոշման զգայական փորձի առկայության, աչքաչափի հետ:

Այժմ նշենք նախադպրոցականի դպրոցական ուսուցման պատրաստվածության չափանիշներտ, որոնք դասակարգվում են հետևյալ կերպ՝

- հատուկ պատրաստության չափանիշներ, որտեղ կարևորվում են թղթի վրա կողմնորոշվելը և գրաֆիկական ընդունակությունները, ինչպես նաև գրաճանաչության ուսուցումը:
- Ֆիզիկական պատրաստության չափանիշներն են բարձր դիմադրողականությունը, լավ առողջական վիճակը, աշխատունակությունը, կամային որակները:
- Մտավոր ոլորտի չափանիշներն են ուշադրության կենտրոնացվածությունը, երևույթների միջև կապեր և փոխհարաբերություններ տեսնելու կարողությունը, առարկաները դասակարգելու էական հատկանիշներն առանձնացնելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու, եզրահանգումներ կատարելու կարողությունը, կամածին հիշողությունը, կապակցված խոսքը, ակտիվ բառապաշարը և ձեռքի մանր շարժումների և տեսաշարժողական կոորդինացիայի զարգացումը:
- Հուզակամային ոլորտի չափանիշներն են կամային որակները /զսպվածություն, համառություն, հանդուրժողականություն, համբերատարություն/: Կարևոր չափանիշ է նպատակին հասնելու ցանկությունը, որոշումներ ընդունելու, գործողությունները պլանավորելու ունակությունը:
- Սոցիալ-հոգեբանական չափանիշներն են հասակակիցների հետ շփվելու պահանջը, սեփական վարքագիծը խմբի կանոններին ենթարկելու

պատրաստակամությունը, նոր սոցիալական՝ աշակերտի դերի գիտակցումը, ներքին դիրքորոշման առկայությունը /երեխայի, մեծահասակի վերաբերմունքը մեծահասակի նկատմամբ, տարիքային նոր մակարդակ բարձրանալու և փոքրերի աչքում մեծ երևալու ցանկություն, դպրոցում սովորելու ցանկություն և այլն/:

- Հաջորդ չափանիշը ինքնագիտակցության, ինքնագնահատականի, բավարար զարգացված մակարդակն է, այսինքն, երեխայի կողմից համարժեք վերաբերմունք իր կարողությունների աշխատանքի արդյունքների, վարքագծի նկատմամբ:

Սոցիալ-հոգեբանական չափանիշների մեջ առանձնացվում են բարոյական որակները, որոնք դրսևորվում են մեծահասակների նկատմամբ հարգալից վերաբերմունքի, ընկերական զգացումների /փոխօգնություն, կարեկցանք, ապրումակցում/, ուրիշների հետաքրքրությունները և ցանկությունները հաշվի առնելու կարծիքները հարգելու կարողության մեջ: Այս ամենի հետ մեկտեղ հարկ է նշել, որ դպրոցին սոցիալ-հոգեբանական հարմարման համար առաջնային նշանակություն ունի երեխայի մինչդպրոցական պատրաստվածությունը նախադպրոցական հաստատություններում և ընտանիքում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԴՐԱՆՔՆԵՐ

Ստորև ներկայացնում ենք դպրոցի նախապատրաստմանն ուղղված պարապմունքների անվանումներ իրենց նպատակներով և խաղի օրինակ, որը կարող են կազմակերպել և ծնողները, և դաստիարակները, և տարրական դասարանի դասվարները:

Պարապմունք 1-Ծանոթացում դպրոցի հետ:

Նպատակն է՝ երեխաներին ծանոթացնել դպրոցին, շեշտադրել նրանց կյանքում դպրոցի ունեցած կարևորագույն դերն ու նշանակությունը:

Պարապմունք 2-Ինչու եմ ցանկանում դպրոց գնալ:

Նպատակն է՝ բացահայտել երեխաների՝ դպրոցական ուսուցման նկատմամբ ունեցած դիրքորոշումը, շարունակել ծանոթացումը դպրոցի, դպրոցական կյանքի հետ:

Պարապմունք 3-Իմ առաջին ուսուցչուհին:

Նպատակն է՝ կարևորել երեխաների կյանքում նրանց առաջին ուսուցչուհու ունեցած անգնահատելի դերը՝ շեշտելով այն, որ հենց առաջին ուսուցչուհին է գրել, կարդալ սովորեցնում, օգնում հաղթահարել հարմարման դժվարությունները:

Պարապմունք 4-Ծանոթացում գրենական պիտույքների հետ:

Նպատակն է՝ տարբերակել բոլոր գրենական պիտույքները, ձևավորել համբերություն և զսպվածություն իրենց ընկերների պատասխանները մինչև վերջ լսելու համար:

Պարապմունք 5-Իմ երազած դպրոցը:

Նպատակն է՝ ձևավորել ինքնարտահայտվելու, սեփական տպավորությունները կիսելու կարողություններ:

Պարապմունք 6-Իմ դասընկերները:

Նպատակն է՝ երեխաների մոտ մշակել սեր և հարգանք իրենց ապագա դասընկերների նկատմամբ, ձևավորել համբերություն և զսպվածություն իրենց ընկերներին մինչև վերջ լսելու համար:

Պարապմունք 7-Սեպտեմբերի մեկը:

Նպատակն է՝ նշել սեպտեմբերի մեկը որպես ուսումնական նոր տարվա սկիզբ,

համատեղ նկարելու միջոցով երեխաներին հնարավորություն տալ թղթին հանձնել սեպտեմբերի 1-ի՝ իրենց անելիքները, զարգացնել կոլեկտիվ աշխատելու, միմյանց առաջարկությունները լսելու հմտություններ:

Պարապմունք 8-Իմ պայուսակը:

Նպատակն է՝ ամբողջացնել դպրոցի վերաբերյալ երեխաների գիտելիքները, ծեփակերտման միջոցով ցուցադրել իրենց պայուսակի պարունակությունը, նպաստել երևակայության, մանր մոտորիկայի զարգացմանը:

Դիդակտիկ խաղերի օրինակներ

Առաջին դասարանցին

Դիդակտիկական խնդիրը: Ամրապնդել երեխաների գիտելիքները դպրոցական ուսուցման վերաբերյալ, ձևավորել դպրոցի նկատմամբ դրական վերաբերմունք, կարգապահություն:

Խաղային կանոնները. Առարկաները կանոնավոր հավաքել ըստ ազդանշանի:

Խաղային գործողությունները. Մրցակցություն՝ ով շուտ պայուսակի մեջ կհավաքի դպրոցի համար բոլոր անհրաժեշտ իրերը:

Խաղի ընթացքի համառոտ նկարագրություն: Դաստիարակի սեղանին դրվում է երկու պայուսակ, իսկ մյուս սեղաններին դպրոցական պարագաներ և զանազան այլ իրեր: Հերթով երկու-երկու երեխա մոտենում են սեղանին և դաստիարակի ազդանշանով սկսում են ընտրել և պայուսակների մեջ կանոնավոր տեղավորել դպրոցական պարագաները: Ով առաջինն է ավարտում՝ նա հաղթում է: Մյուս երեխաներն այդ ընթացքում հանդես են գալիս դիտորդի դերում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել.

1. Հիմնախնդրի շուրջ հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունից պարզվում է, որ վեց տարեկանների սոցիալ-հոգեբանական նախապատրաստումը դպրոցին մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է և ենթադրում է երեխաների սոցիալ-անձնային, մտավոր, հուզակամային և բարոյական նախապատրաստում դպրոցական ուսուցմանը:
2. Երեխաների դպրոցին սոցիալ-հոգեբանական պատրաստվածության դժվարություններ հիմնականում կապված են դպրոցական կյանքին ոչ լիարժեք պատրաստվածության, ուսումնական գործունեության մեջ անհաջողությունների կամ ուսուցչի հետ փոխհարաբերությունների և դրանց առաջացրած ապրումների հետ:
3. Երեխայի դպրոցական ուսուցման նպատակաուղղված և համակարգված նախապատրաստումը, զարգացնող առարկայական միջավայրի ստեղծումը, մանկապարտեզում դպրոցական կյանքին վերաբերող դրական պատկերացումների ձևավորումը նպաստում է նրա հետագա դպրոցական կյանքին, սոցիալ-հոգեբանական հաջող հարմարմանը:
4. Հարմարման դժվարությունները հաղթահարելու համար ծնողներին և դասվարներին խորհուրդ է տրվում հետևել երեխաների դպրոցական առօրյային, դպրոցում կատարվածին, նրանց չծանրաբեռնել լրացուցիչ պարապմունքներով, ճիշտ և լիարժեք կազմակերպել օրվա կարգացույցը, ուշադրություն դարձնելով ֆիզիկական դաստիարակությանը, առողջապահական խնդիրների լուծմանը:
5. Եվ, ի վերջո, նախքան դպրոց հաճախելը, նպատակային աշխատանքի միջոցով կարելի է առավելագույնս նպաստել ավագ նախադպրոցականների դպրոցական պատրաստվածությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հովհաննիսյան Ա. «Դպրոցի շեմին» ձեռնարկ ծնողների և մանկավարժների համար, Երևան, 2007
2. Հովհաննիսյան Ա. «Դաստիարակենք միասին», մեթոդական ձեռնարկ Երևան, 2014, 151 էջ
3. Մարության Ս.Ա., Դալլաքյան Ա.Մ., «Նախադպրոցական մանկավարժություն» Երևան 2008, 288 էջ
4. Варламова А., Я. Школьная адаптация, Волгоград, 2005
5. Венгер Л. А. Готов ли ребенок к школе, М., 1994
6. Вьюнова Н. И., Гайдар К. М., Темнова Л. В. Психологическая готовность ребенка к обучению в школе, М., 2003, стр.124-125, 256
7. http://psy.1september.ru/article.php?ID=200202006